Դ. եւ Ե. դարերում. Տրդատ մեծ քրիստոնեայի օրով հայրապետութեան պաշտօնին հասած. յիշւում են Օտայ եւ Վահան Ամատունիները,* Դ. դարի կէսերին Ներսէս մեծի ժամանակ Կարէն, եւ Պարգեւ եւ սորա որդին Մանուէլ Ամատունի, Արշակ Գ.-ի ժամանակները:** Հինգերորդ դարում Հայոց հայրապետն էր Վահան Ամատունի, Ս. Մեսրոպի յուղարկաւորը եւ նորա անուան տաճար կանգնողը, մասնակից Վարդանանց պատերազմին, նախարարների դերութեան եւ դաձին: Սորա հայրապետութեան օրով գումարուեցաւ 447 թ. Շահապիվանի ժողովը:†

Վահանանց ապստամբութեան ժամանակ յիշւում է «Վարագղատ Շապուհ ի տոհմէն Ամատունեաց», որ բաժանւում է ուխտեալների խմբից եւ նրանց միաբանութիւնը մատնում Ատրվշնասպ մարզպանին:†† Հինգերորդ դարի վերջում եւ Զ.-ի սկզբում Ամատունեաց նահապետն էր Մանդէն, որ մասնակից էր Բարդէն կաթուղիկոսի ժողովին՝ 505 թուին:‡ Այնուհետեւ Ամատունի իշխանի յիշատակութիւն չունինք մինչեւ Զ. դարի վերջերը, երբ հանդէս է գալիս Կոտիտ Ամատունեաց տէր: Մի խումբ նախարարներ եւ նրանց մէջ Կոտիտ, կամենում են ապստամբուել Պարսիկներից, բայց երկպառակութեամբ է վերջանում խնդիրը, եւ Մամակ Մամիկոնեանի եւ Ստեփանոս Սիւնիի հետ

Պատկ. 18

*Ագաթանգեղոս եր. 163, 164:

**Փաւստոս Բիւզանդ եր. 28, 31, 49, 81:

†Արսէն Ղլտճեան. Կանոնագիրք Հայոց. եր. 59:

††Ղազար Փարպեցի եր. 120. էջմ. Հրտ.:

‡Գիրք թղթոց. եր. 42: